

ՓՈՒԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ,
ՄԻԱՅՑԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՑԱՆ
ԳՐԱՄԵՆՅԱԿԻ,**

**ՕԲՍՖԱՄԻ (ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ) ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ
ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**

ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով, որ Եվրոպական հանձնաժողովի Մարդասիրական օգնության հարցերով գլխավոր վարչության կողմից (այսուհետ՝ Ծրագիր) Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի Հայաստանյան գրասենյակը (այսուհետ՝ Յունիսեֆ), Օքսֆամի-ի (Մեծ Բրիտանիա) հայաստանյան մասնաճյուղը (այսուհետ՝ Օքսֆամ) և Հայկական կարմիր խաչի ընկերությունն (այսուհետ՝ ՀԿԽԸ) ընտրվել են որպես Ադմտնրի ռիսկերի կառավարման տարածաշրջանային ծրագրի հայաստանյան բաղադրիչի իրականացնող կազմակերպություններ,

Հաշվի առնելով նաև ՄԱԿ-ի և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև ստորագրված «Միավորված ազգերի կազմակերպության զարգացման աջակցության 2010-2015 թթ. ծրագիրը»,

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ ԿԳՆ), ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ ԱԻՆ), Յունիսեֆը, Օքսֆամը և ՀԿԽԸ-ն (այսուհետև՝ կողմեր) ցանկանում են համատեղ ուժերով համագործակցել՝ աջակցելով Ծրագրի իրականացմանը և համաձայնության են եկել հետևյալի շուրջ.

Հոդված 1. Հուշագրի նպատակը

Սույն Փոխըմբռնման հուշագիրը (ՓՀ) սահմանում է Եվրահանձնաժողովի կողմից ֆինանսավորվող աղետների ռիսկերի նվազեցման ծրագրի գործողությունների շրջանակը, ինչպես նաև կողմերի պարտականություններն ու համագործակցային պայմանավորվածությունները:

Հոդված 2. Համագործակցության պայմանները

1. Ծրագրի գործողությունների իրականացումը համակարգվում և մշտադիտարկվում է կողմերի ներկայացուցիչներից բաղկացած Համակարգող խորհուրդի կողմից: Համակարգող խորհուրդն ուղղորդում է Ծրագրի ռազմավարությունը և նպաստում դրա իրականացմանը.

1. պարբերական հանդիպումների ու Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման միջոցով,
2. ընդհանուր նախաձեռնությունների վերաբերյալ համաձայնության գալու միջոցով,
3. իրականացված գործողությունների մասին զեկուցելու միջոցով:

2. Համակարգող խորհուրդի հանդիպումները տեղի են ունենալու յուրաքանչյուր եռամսյակ առնվազն մեկ անգամ: Հանդիպումների արձանագրությունները կազմվում են կողմերի կողմից՝ հերթականությամբ:

Հոդված 3. կողմերի հիմնական պարտավորություններ

ՀՀ ԿԳՆ և ՀՀ ԱԻՆ պարտականությունները հետևյալն են.

1. Յուրաքանչյուր իրականացնող կազմակերպության մասով սահմանված աշխատանքային ծրագրերում ամրագրված գործողությունների իրագործման համար ապահովել ինստիտուցիոնալ աջակցություն, այդ թվում՝ իրենց ենթակայության կազմակերպությունների միջոցով:

2. Անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան պետական հաստատությունների, միջազգային կազմակերպությունների, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ մասնակցել չյոգոյի գործողությունների ծրագրի խթանման համատեղ աշխատանքներին:

Իրականացնող կազմակերպությունների պարտականությունները հետևյալն են.

1. Տրամադրել ֆինանսական աջակցություն աշխատանքային ծրագրերում նկարագրված գործողությունների համար, որոնք մշակվել են ՀՀ ԿԳՆ-ի և ԱԻՆ-ի հետ համատեղ և կցված են սույն հուշագրին:
2. Ժամանակին ապահովել Ծրագրի գործողությունների կազմակերպումը՝ աշխատանքային ծրագրերին համապատասխան: Ապահովել Ծրագրի իրականացման մշտադիտարկումը և զննուցել առաջընթացի մասին Համակարգող խորհուրդին:
3. Խթանել և աջակցել չյոգոյի գործողությունների ծրագրի (ԿԳԾ) դրույթների և դրա առաջնայնությունների իրականացմանը կրթության ոլորտում և համայնքներում:
4. Հայաստանում կամ տարածաշրջանային մակարդակով կազմակերպող նախաձեռնությունների մասին ժամանակին տեղեկացնել Համակարգող խորհրդի անդամներին և առկա ֆինանսական միջոցների շրջանակներում խթանել Կողմերի և այլ շահակիցների մասնակցությունը:
5. Կողմերի և այլ շահակիցների մասնակցությամբ պարբերաբար հանդիպումներ կազմակերպել՝ գործողությունները համակարգելու, տեղեկատվություն և լավագույն փորձի փոխանակման նպատակով:
6. Պարբերական հանդիպումների, խորհրդակցությունների և վերապատրաստումների միջոցով նպաստել կրթական և աղետներին պատրաստվածության քաղաքականության և օրենսդրության մեջ նրեխայակներտոն ռազմավարության ներառմանը:
7. Նպաստել աղետների ռիսկերի նվազեցմանը նվիրված կրթական, տեղեկատվական և հաղորդակցական նյութերի մշակմանը, բարելավմանն ու հրատարակմանը (գրքույկներ, ուսումնական կյութեր, տեղեկատվական թերթիկներ, լրատվական նյութեր և այլն)՝ տեղական, ազգային և (կամ) ներառարածաշրջանային իրազեկման արշավների և ուսուցման համար:
8. Պարբերական հանդիպումների, վերապատրաստումների և աղետների ռիսկի նվազեցման այլ գործողությունների միջոցով նպաստել ԱԻՆ համակարգերի և կարողությունների զարգացմանն ու հզորացմանը համայնքային մակարդակում:

Հոդված 4. Ծրագիրն իրականացնող կազմակերպությունների աշխատանքի ոլորտները՝

1.Ցունխսեֆը .

1. Նպաստելու է, որ աղետներին պատրաստվածության և կրթության ոլորտում կառավարության քաղաքականությունը ներառի նրեխաների կարիքներն ու մտահոգությունները՝ նպաստելով բոլոր մակարդակներում անվտանգության և ռիսկակայման մշակույթի ձևավորմանը:
2. Հզորացնելու է աղետներին պատրաստվածության և ռիսկերի նվազեցման կրթության ոլորտում տեղական և ազգային մարմինների, ինչպես նրեխաների հարցերով զբաղվող ծառայությունների կարողությունները Արագածոտնի, Գեղարքունիքի, Շիրակի և Վայոց Ձորի մարզերում՝ աշխատանքային ծրագրերում նշված գործողությունների միջոցով:
3. Նպաստելու է երեխաների ու երիտասարդների անվտանգության և ռիսկակայման մշակույթի զարգացմանն ուղղված կարողությունների ու հմտությունների ձևավորմանը՝ իրենց համայնքներում իմաստալից մասնակցության, առաջնորդության, ինքնակառավարման և քաղաքացիական ներգրավման միջոցով:
4. Բացահայտելու, կազմելու և տարածելու է աղետների ռիսկերի նվազեցման լավագույն փորձը վերոհիշյալ բոլոր շրջաններում ընդգրկված շահակիցների համար և կազմակերպելու է աղետներին պատրաստվածության և ռիսկերի նվազեցման վերաբերյալ հանրային իրազեկման արշավներ:

2. ՀԿԽԸ .

1. Երակի մարզի թիրախային համայնքներում հզորացնելու է աղետներին պատրաստված լինելու և աղետներին արձագանքելու ռազմավարություններն ու կարողությունները:
2. Աղետների ռիսկերի նվազեցման և կլիմայի փոփոխության հարցերում բարձրացնելու է թիրախային դպրոցների իրազեկության և պատրաստվածության մակարդակը և նրևխաների միջոցով խրախուսելու է ընտանիքներում աղետաանվտանգ պարզագույն միջոցների կիրառմանը՝ նվազեցնելու ընտանիքների խոցելիությունը բնական աղետների նկատմամբ:
3. Նպաստելու է աղետների ռիսկերի նվազեցման տարբեր շահակիցների միջև շփումների, ինչպես նաև տեղական և տարածաշրջանային մակարդակով մշակված մեթոդների և գործողությունների համակարգմանը:
4. Ծրագրի լավագույն փորձի և քաղված դասերի ամբողջացման ու տարածման միջոցով նպաստելու է Հարավային կովկասում Ծրագրի տարածաշրջանային, ազգային և միջազգային շահակիցների համագործակցությանը:

3. Օրսֆամը.

1. Բարձրացնելու է համայնքների և մարզային հաստատությունների բնական աղետներին դիմակայելու և խոցելիությունը նվազեցնելու կարողությունները.

1. Վայոց Ձորի մարզի ընտրված 10 համայնքներում գիտելիքի տարածման, նորարարական և կրթական ծրագրերի օգնությամբ ձևավորելու է անվտանգության և աղետներին դիմակայելու մշակույթ,
2. Ստեղծելու է աղետների ռիսկերի նվազեցման համայնքափոխ մեխանիզմներ, ինչպես նաև խթանելու է մարզային ու հանրապետական իշխանություններին՝ այդ մեխանիզմները որպես առաջնայնություններ ճանաչելու հարցում,
3. Հանրապետական և մարզային շահագրգիռ կազմակերպությունների և Կողմերի միջև մշտական նրկխոսության, համակարգման և տեղեկությունների փոխանակման օգնությամբ հզորացնելու է աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարությունները:
4. Ակտիվ մասնակցության և տարբեր շահագրգիռ կողմերի հետ համագործակցության օգնությամբ նպաստելու է ՀՀ *Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պատճիորմի հիմնմանը*:

Հոդված 5. Ընդհանուր դրույթներ

1. Կնքելով սույն Փոխըմբռնման հուշագիրը, Կողմերը պահպանում են իրենց առանձին և ուրույն առաքելություններն ու լիազորությունները, ինչպես նաև՝ սեփական պատասխանատվության շրջանակները: Այլ հատուկ ցուցում չլինելու պարագայում՝ Կողմերի միջև սույն ՓՎ-ում ամրագրված համագործակցությունը չի համարվում կամ մեկնաբանվում որպես ընկերակցություն կամ իրավաբանական մարմնի կամ անձի այլ տեսակ: Սույն ՓՎ-ի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել որպես սույն ՓՎ-ի ստորագրումից առաջ կամ հետո նրկու կամ ավելի կողմերի միջև եղած այլ համաձայնագրերը կամ պայմանագրերը որևէ կերպ փոխարինող կամ դրանց միջամտող փաստաթուղթ: Սույն ՓՎ-ն իրենից չի ներկայացնում կողմերի անունից ստանձնած դրամական միջոցների պարտավորություն: Սույն ՓՎ-ն իրավաբանորեն կատարման համար պարտադիր պարտավորություն չի Կողմերից որևէ մեկի համար և չի ստեղծում որևէ իրավունքներ մեկ ուրիշ կողմի համար:

2. Ուժի մեջ մտնելու ժամկետ՝ սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրելու պահից:

3. Երրորդ անձանց փաստաթղթեր՝ վերոնշյալ նախաձեռնություններն իրականացնելու համար կողմերը կարող են պնտական և մասնավոր անձանց հետ կնքել այնպիսի պայմանագրեր և այլ փաստաթղթեր, որոնք նրանք անհրաժեշտ կհամարեն:

4. Ղեկավարող օրենքներ և կանոններ՝ սույն համաձայնագրի իրականացնող կազմակերպությունները պարտավոր են հատկացնել և ծախսել դրամական միջոցներ, իրականացնել սույն ՓՀ-ով նախատեսված գործողություններ իրենց կանոնակարգերի համաձայն:

5. Հրապարակայնություն՝ յուրաքանչյուր կողմ ապահովում է սույն ՓՀ-ի շրջանակներում տրամադրվող աջակցության համար համապատասխան հրապարակայնություն՝ ներառյալ այլ կողմերի ներդրման պատշաճ ճանաչումը: Այլ կողմն ընդգրկող ցանկացած հրապարակային գործողություն պետք է նախաձեռնվի հաշվի առնելով այդ կողմի շահերը: Կողմերը ժամանակ առ ժամանակ խորհրդակցում են այս հարցի շուրջ:

6. Կողմերն իրավասու չեն որևէ ձևով կամ նդանակով օգտագործել մեկ այլ կողմի անվանումը, պաշտոնական խորհրդանիշերը, կնիքները, կրթական նյութերը և այլ փաստաթղթերը, ինչպես նաև այլ կողմերի անվանումների հապավումներն առանց համապատասխան կողմի նախնական թույլտվության:

7. Կողմերի կրթական նյութերը և փաստաթղթերը՝ կողմերն իրավասու չեն որևէ ձևով կամ նդանակով օգտագործել այլ կողմերի պատրաստած կրթական նյութերը և այլ փաստաթղթերը, մեջբերումները այլ կողմերի փաստաթղթերից և կրթական նյութերից՝ առանց համապատասխան կողմի թույլտվության կամ մեջբերման աղբյուրը նշելու:

8. Լիազոր ներկայացուցիչներ՝ կողմերը ներկայացվում են սույն ՓՀ-ի ստորագրած պաշտոնյաների կողմից: Յուրաքանչյուր կողմ մյուս Կողմերին գրավոր ծանուցմամբ կարող է տեղեկացնել Օրագրի իր ներկայացուցիչներին, որոնք լիազորված կլինեն ներկայացնելու տվյալ Կողմը բոլոր գործողություններում, բացառությամբ սույն ՓՀ-ում պաշտոնական փոփոխություններ մտցնելը: Յուրաքանչյուր կողմ պետք է գրավոր ծանուցի այլ Կողմին իր լիազոր ներկայացուցիչների փոփոխության մասին:

9. Տևողություն՝ սույն ՓՀ-ն ուժի մեջ է գտնվում մինչև 2011 թ. օգոստոսի 1-ը կամ գործում է ավելի երկար ժամկետով, ինչի շուրջ Կողմերը համաձայնության կզան՝ պայմանով, որ սույն փաստաթուղթը նախքան դրանում սահմանված ժամկետը չի դադարեցվի ստորև արհագրված դրույթներով:

10. Լրացումներ և փոփոխություններ՝ սույն ՓՀ-ն կարող է լրացվել կամ փոփոխվել կողմերի գրավոր համաձայնությամբ:

11. Գործողության ընդհատում կամ դադարեցում՝ յուրաքանչյուր Կողմ իր հայնցողությամբ կարող է ամբողջությամբ կամ մասամբ դադարեցնել սույն ՓՀ-ն՝ այլ կողմերին ներկայացնելով իր գրավոր ծանուցումը նրանում (30) օր առաջ:

12. Ընդու՝ սույն ՓՀ-ն կազմված է անգլերեն և հայերեն լեզուներով: Երկու տարբերակների միջև նրկիմաստության կամ հակասության պարագայում՝ գերակայում է անգլերեն լեզվով կազմված տարբերակը:

Հոդված 6. Այլ դրույթներ՝

Ի հաստատում վերոհիշյալի՝ կողմերն ի դեմս իրենց պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների ստորագրում են իրենց անունից սույն Փոխըմբռնման հուշագիրը և հանձնում են այն 2010 թ. _____ ամսաթվով:

Հուշագիրը ստորագրվում է հինգ բնագիր օրինակից:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն

Պն. Արմեն Աշոտյան
Նախարար

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն

Պն. Արմեն Շիրիզյան
Նախարար

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ

Տկ. Լևոնի Մուշիքի
Ներկայացուցիչ

Օրսֆամի (Մեծ Բրիտանիա) հայաստանյան մասնաճյուղ

Տկ. Մարգարիտա Տակոբյան
Հայաստանյան ծրագրի տնօրեն

Հայկական Կարմիր խաչի ընկերություն

Պն. Մխիթար Մնացականյան
Նախագահ

